ՍԴ3/0107/01/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

30 հունիսի 2025 թվական ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ՍԴ3/0107/01/25 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2025 թվականի հունիսի 20-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2025 թվականի մայիսի 20-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Ավետիք Անդրանիկի Խաչատրյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգիրք) 359-րդ հոդվածի 3-րդ մասով թիվ 58213625

(ՍԴ3/0107/01/25) քրեական վարույթը՝ հեռական կարգով դատաքննություն իրականացնելու միջնորդությամբ:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Ա.Ոսկանյան) 2025 թվականի մայիսի 23-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0107/01/25 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի հունիսի 5-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Ա.Մաթևոսյան) 2025 թվականի հունիսի 20-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0107/01/25 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հունիսի 25-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հուլիսի 7-ի որոշմամբ Ա.Խաչատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ *«(…) նա հանդիսանալով ՊԲ թիվ 39138 զորամասի վերանորոգման վաշտի պարտադիր ժամկետային զինծառայող, 2010 թվականի մարտի 14-ին խախտելով ՀՀ ԶՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ հոդվածով սահմանված զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները, ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության պայմաններում նույն վաշտի պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Վալերիկ Ազատի Մուրադյանին ճնշելու, նրա պատիվն ու արժանապատվությունը ստորացնելու*

դիտավորությամբ վերջինիս կողմից «հոր արևով» սուտ երդվելու, խուսափված գումարը ժամանակին չվերադարձնելու համար հալածանքների է ենթարկել Վալերիկ Մուրադյանին, ինչի հետևանքով վերջինս նույն օրը՝ ժամը 24:00-ի սահմաններում կախվելու եղանակով ինքնասպանություն է գործել:

Այսպես.

2010 թվականի մարտի 14-ին ՊԲ թիվ 39138 զորամասի վերանորոգման վաշտի պարտադիր ժամկետային զինծառայող, եֆրեյտոր Ավետիք Խաչատրյանը և նույն վաշտի զինծառայող, շարքային Հակոբ Հակոբյանը 2.000 ՀՀ դրամ պարտքով գումար են խնդրել շարքային Նորայր Գրիգորյանից, ինչին վերջինս պատասխանել է, որ իրենց վաշտի զինծառայող, շարքային Վալերիկ Մուրադյանն իրեն 6.000 ՀՀ դրամ գումար է պարտք, ուստի կարող են 2.000 ՀՀ դրամը նրանից վերցնել: Նույն օրն Ավետիք Խաչատրյանը և Հակոբ Հակոբյանը հանդիպել են Վալերիկ Մուրադյանին և հետաքրքրվել Նորայր Գրիգորյանին ունեցած պարտքի մասին: Վալերիկ Մուրադյանը նրանց հայտնել է, որ թիվ 39654 զորամասում ծառայող իր համաերկրացին՝ Տեր-Հովհաննես Հակոբյանը խուսափել, ավելին երդվել է մինչև օրվա վերջ իրեն 6.000 ՀՀ դրամ պարտքով գումար տալ: Որոշ ժամանակ անց Հակոբ Հակոբյանը հանդիպել է Վալերիկ Մուրադյանին և հետաքրքրվել է գումարի մասին, ում Վալերիկ Մուրադյանը պատասխանել է, որ իր համաերկրացուն դեռ չի տեսել և երդվել է «հոր արևով», որ մինչև օրվա վերջ պարտադիր կտա պահանջված գումարը: Ժամը 18:00-ի սահմաններում Ավետիք Խաչատրյանն ու Հակոբ Հակոբյանը կրկին հանդիպել են Վալերիկ Մուրադյանին և հետաքրքրվել պահանջված գումարով, ինչին Վալերիկ Մուրադյանը կրկին հայտնել է, որ դեռ չի տեսել համաերկրացուն՝ միևնույն ժամանակ հաստատելով նախապես տված խոստումը՝ մինչև օրվա վերջ գումարը տալու վերաբերյալ: Դրանից անմիջապես հետո, երբ Ավետիք Խաչատրյանը առաջարկել է միասին գնալ Վալերիկ Մուրադյանի համաերկրացու մոտ և անձամբ նրանից պարզաբանել Վալերիկ Մուրադյանի հայտնածը, վերջինս, գիտակցելով, որ այդ դեպքում կբացահայտվի նաև Տեր-Հովհաննես Հակոբյանի կողմից իրականում իրեն գումարը խոսք տված չլինելու հանգամանքը, որը հետագա ծառայության ընթացքում անբարենպաստ հետևանքներ կառաջացնի իր համար, տարակուսել է, սակայն այլ ելք չունենալով՝ համաձայնել է Ավետիք Խաչատրյանի

առաջարկին: Հասնելով թիվ 39654 զորամասի ՀԱԿ-ի մոտ՝ Վալերիկ Մուրադյանը միայնակ մտել է զորամաս և հանդիպելով Տեր-Հովհաննես Հակոբյանին՝ նրան տեղեկացրել է, որ ինքը «հոր արևով» երդվել է մինչև օրվա վերջ վերադարձնել իր ունեցած 6.000 ՀՀ դրամ պարտքը, որպիսի պայմաններում՝ զինծառայողների շարքերում չնվաստանալու, «սրբապիղծ» անվամբ չպիտակավորվելու և նման կարգավիճակով ողջ ծառայությունը չշարունակելու համար խնդրել է Տեր-Հովհաննես Հակոբյանին իր հետ եկած տղաների մոտ հաստատել իր խոսքերը՝ իբր խոստացել է 6.000 ՀՀ դրամ գումարը տալ այդ օրը, սակայն իր մոտ այդ պահին գումար չլինելու պատճառով այն կարող է տալ միայն հաջորդ օրը: Տեր-Հովհաննես Հակոբյանը, տեսնելով համաերկրացու մտահոգված և տարակուսած հոգեվիճակը, համաձայնել է օգնել նրան և հաստատել նրա խոսքերը, որից հետո միասին գնացել են ՀԱԿ-ի մոտ և հանդիպել իրենց սպասող Հակոբ Հակոբյանին ու Ավետիք Խաչատրյանին: Ի պատասխան վերջինիս հարցադրումներին՝ Տեր-Հովհաննես Հակոբյանը պայմանավորվածության համաձայն հաստատել է Վալերիկ Մուրադյանի խոսքերը: Ավետիք Խաչատրյանը, հարցրել է վերջինիցս, թե նա որքան գումար է խոստացել տալ Վալերիկ Մուրադյանին: Տեր-Հովհաննես Հակոբյանը վախենալով, որ իրեն կստիպեն նույն օրը ձեռք բերել և հանձնել «խոստացած» գումարը, պատասխանել է՝ իբր ինքը խոստացել է 3000 ՀՀ դրամ գումար, այլ ոչ թե 6000 ՀՀ դրամ գումար: Դրանից հետո Ավետիք Խաչատրյանը պահանջել է նույն օրը հայթայթել խոստացված գումարը և հանձնել Վալերիկ Մուրադյանին, ապա անդրադառնալով նաև վերջինիս կողմից իրենց խաբելուն՝ կշտամբել է՝ հավելելով, որ իր հետ դեռ կզրուցեն զորամասում: Ավետիք Խաչատրյանի և Հակոբ Հակոբյանի հեռանալուց հետո Տեր-Հովհաննես Հակոբյանը փորձել է ամեն կերպ հայթայթել պահանջված գումարը, սակայն տեսնելով, որ տրված ժամկետում չի կարող ձեռք բերել գումարը և դրանով օգնել Վալերիկ Մուրադյանին՝ նրան հայտնել է այդ մասին: Վերջինս հուսահատված հայտնել է, որ միևնույն է ինքն ամեն գնով պետք է մինչև 24:00-ն այդ գումարը գտնի, քանի որ երդվել է «հոր արևով», հակառակ դեպքում՝ կկախվի և դրանով «կպրծնի» ու տխուր հեռացել է:

Այդ ընթացքում Ավետիք Խաչատրյանը Հակոբ Հակոբյանի հետ հանդիպել է Նորայր Գրիգորյանին և կրտսեր սերժանտ Կորյուն Ավագյանին՝ ապա բարկացած

տոնով տեղեկացրել նրանց մինչ այդ տեղի ունեցած իրադարձությունների, մասնավորապես՝ Վալերիկ Մուրադյանի կողմից «հոր արևով» սուտ երդվելու և իրենց խաբելու մասին, որից հետո Նորայր Գրիգորյանն առաջարկել է գտնել և պայմանագրային զինծառայողների սենյակ կանչել Վալերիկ Մուրադյանին՝ իրենց խաբելու և «հոր արևով» սուտ երդվելու վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար:

Ավետիք Խաչատրյանի պահանջով պայմանագրային զինծառայողների սենյակ է եկել Վալերիկ Մուրադյանը, որտեղ զրույցի մասնակիցներից Նորայր Գրիգորյանը և Ավետիք Խաչատրյանը, խախտելով ՀՀ ՔՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ հոդվածով սահմանված զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները, այն է՝ «բարձր պահել զինվորական ընկերասիրությունը, չինայելով կյանքը՝ ընկերներին փրկել վտանգից, նրանց օգնել խոսքով և գործով, հարգել նրանցից յուրաքանչյուրի պատիվն ու արժանապատվությունը, իր և ուրիշ զինծառայողների նկատմամբ թույլ չտալ կոպտություն և ծաղրուծանակ, նրանց հեռու պահել անարժան արարքներից», իրենց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության պայմաններում, Կորյուն Ավագյանի և Հակոբ Հակոբյանի ներկայությամբ Վալերիկ Մուրադյանին ճնշելու, նրա պատիվն ու արժանապատվությունը ստորացնելու դիտավորությամբ ցուցադրաբար հալածանքների են ենթարկել նրան՝ պահանջելով պարզաբանել իր արարքները՝ «հոր արևով» սուտ երդվելը, խոստացված գումարը ժամանակին չվերադարձնելը, համաերկրացու խոսքերի վրա հիմնվելով կրկին «հոր արևով» սուտ երդվելը, ինչպես նաև մի քանի անգամ իրենց խաբելը: Վալերիկ Մուրադյանը չունենալով տրված հարցերի պատասխանները, կախել է գլուխը և ստեղծված բարոյահոգեբանական ճնշող իրավիճակից խուսափելու համար հայտնել է, որ շտապ պետք է գնա՝ խնդրելով զրույցը հետաձգել: Նորայր Գրիգորյանը, ընդգծելով նշված զրույցի կարևորությունը, հարցրել է Վալերիկ Մուրադյանից արդյոք առկա զրույցից իր համար էլ ավելի կարևոր գործ կա: Շարունակելով հանցավոր դիտավորությունը և հաստատապես տեղյակ լինելով, որ Վալերիկ Մուրադյանի մոտ գումար չկա, Ավետիք Խաչատրյանը ժամանակ է տվել նրան՝ մինչև նույն օրը՝ ժամը 24:00-ն գումարը բերելու համար, ինչին Նորայր Գրիգորյանը չի առարկել:

Արդյունքում Վալերիկ Մուրադյանը, չկարողանալով դրված կարճ՝ 2-3 ժամվա ընթացքում հայթայթել գումարը և գիտակցելով չվերադարձնելու դեպքում «սրբապղծի» պիտակով ծառայությունը շարունակելու նվաստացուցիչ հետևանքները, հայտնվել է անելանելի վիճակում և նույնը օրը՝ Ավետիք Խաչատրյանի և Նորայր Մուրադյանի կողմից դրված վերջնաժամկետի ավարտից հետո՝ ժամը 24:00-ի սահմաններում, զորամասի վերանորոգման վաշտի սպայական սենյակի հետնամասում պարանի միջոցով կախվելու եղանակով ինքնասպանություն է գործել: (…)»[1]*:*

6. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննարկելով պաշտպանի միջնորդությունը, 2025 թվականի հունիսի 5-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) 2025 թվականի հունիսի 5-ին, նախնական դատաքննությունների ընթացքում, վարույթի ընդդատության հարցի քննարկման ժամանակ, մեղադրյալ Ավետիք Անդրանիկի Խաչատրյանի պաշտպան Սարմիկ Հարությունյանը միջնորդել է թիվ ՍԴ3/0107/01/25 քրեական գործի ընդդատությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների համաձայն փոխել վարույթի տարածքային ընդդատությունը և այն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան, նկատի ունենալով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում:*

Հանրային մեղադրող Հ.Ալեքսանյանը քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ առարկություն չի ներկայացրել:

2025 թվականի մայիսի 23-ին թիվ ՍԴ3/0107/01/25 քրեական գործով տուժողի լիազոր ներկայացուցիչ Ա.Պապիկյանը գրավոր միջնորդություն է ներկայացրել Դատարան և նշել, որ թիվ ՍԴ3/0107/01/25 քրեական գործը [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն] ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին և խնդրել այն փոխանցել ըստ ընդդատության:

(…)

---

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 9, թերթեր 115-118:

Տվյալ դեպքում թիվ ՍԴ3/0107/01/25 քրեական վարույթով վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը՝ 16-ից 9-ը՝ վկաներ Լևոն Թաթոյանը, Կորյուն Ավագյանը, Սեյրան Գրիգորյանը, Գագիկ Պետրոսյանը, Արամ Առստամյանը, Մեղա Ղազարյանը, Սուրեն Հովհաննիսյանը, որպես վկա դատակոչված փորձագետ Գագիկ Հարությունյանը և տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Արայիկ Պապիկյանը բնակվում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում:

Դատարանն արձանագրում է, որ վերոգրյալ պայմանների առկայությունը բավարար են սույն քրեական գործի տարածքային ընդդատությունը փոփոխելու համար:

Արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման սկզբունքից ելնելով Դատարանն արձանագրում է նաև, որ սույն քրեական գործով մյուս վկաներ Հակոբ Հակոբյանը, Տեր-Հովհաննես Հակոբյանը, Վաչե Մկրտչյանը, Գոռ Սիմոնյանը, տուժողի իրավահաջորդ Նանա Մուրադյանը բնակվում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքին մոտ բնակավայրերում՝ Արմավիրի, Կոտայքի և Լոռու մարզերում:

Նկատի ունենալով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում են Երևան քաղաքում, Դատարանը գտնում է, որ սույն քրեական վարույթի տարածքային ընդդատությունն անհրաժեշտ է փոխել և այն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան (...)»[2]*:*

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հունիսի 20-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վարույթի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել, եթե՝*

ա) մեղադրյալը տվել է դրա վերաբերյալ իր համաձայնությունը,

բ) վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում:

---

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 16, թերթեր 29-32:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261 հոդվածի 5-րդ մասի բովանդակությունից ակնհայտ է, որ այդ հոդվածով սահմանված կարգով վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու համար անհրաժեշտ է վերը նշված երկու պայմանների միաժամանակյա առկայությունը, և դրանցից թեկուզև մեկի բացակայությունն անհնար կդարձնի այդպիսի որոշման կայացման հնարավորությունը:

Ուշադրության է արժանի այն, որ վերը նշված պայմաններից մեկը՝ մեղադրյալի համաձայնությունը, կապված է մեղադրյալի անձից անբաժանելի իրավունքների իրականացման հետ, քանի որ ՀՀ Սահմանադրության 63 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք, ինչը նշանակում է, որ ընդդատության կանոնների պահպանմամբ քրեական գործը վարույթ ընդունած դատարանի «փոփոխության» վերաբերյալ համաձայնությունը բացի մեղադրյալից, այլ անձի կողմից տրվել չի կարող:

Այս համատեքստում հարկ է նշել, որ հեռակա վարույթով մեղադրյալի անձից անբաժանելի միակ իրավունքը, որը կարող է իրականացնել վերջինի պաշտպանը, դա ենթադրյալ հանցանքին մեղադրյալի առնչությունը կամ մեղավորություն ընդունելն է, սակայն մի դեպքում, երբ մեղադրյալն այդ մասին գրավոր, հստակ և պատշաճ ձևով տեղեկացրել է վարույթն իրականացնող մարմնին:

Որոշման 5.1 կետում մեջբերված հոդվածների դրույթներն ու դրանց վերաբերյալ իրավական վերլուծությունները կիրառելով սույն գործի փաստերի նկատմամբ ակնհայտ է, որ «Քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու մասին» Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2025 թվականի հունիսի 5-ի որոշման կայացման պահին բացակայել է վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ մեղադրյալ Ավետիք Անդրանիկի Խաչատրյանի համաձայնությունը, իսկ պաշտպան Սարմիկ Հարությունյանն իրավասու չէր մեղադրյալի փոխարեն տալ այդպիսի համաձայնություն, քանի որ այդ իրավունքը՝ հանդիսացել է մեղադրյալի անձից անբաժանելի և պաշտպանի կողմից իրականացվել չէր կարող: (…)»[3]:

---

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 16, թերթեր 46-49:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՍԴ3/0107/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]:

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած են ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտներից, որոնք կարող են առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցելիս, չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, և պետք է հաշվի առնվի նաև արդարադատության շահը:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

4. Այլ պետության տարածքում ենթադրաբար կատարված հանցանքի վերաբերյալ վարույթն ընդդատյա է այն դատարանին, որի դատական տարածքում է գտնվում մեղադրյալի բնակության կամ հաշվառման վերջին վայրը, իսկ եթե

հնարավոր չի եղել այն պարզել, ապա այն դատարանին, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթը վերջինն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

5. Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը: (...)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(...)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (...)»:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Ա.Խաչատրյանի վերաբերյալ թիվ 58213625 քրեական վարույթով նախաքննությունն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի՝ պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում[7]:

- Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Երևան քաղաքում, որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին[8]:

---

[7] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 15, թերթ 66:
[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն իր անհամաձայնությունն է հայտնել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշմանը՝ փաստելով, որ սույն վարույթով բացակայել է վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ մեղադրյալ Ա.Խաչատրյանի համաձայնությունը, իսկ պաշտպանն իրավասու չէր մեղադրյալի փոխարեն տալ այդպիսի համաձայնություն, քանի որ այդ իրավունքը հանդիսանում է մեղադրյալի անձից անբաժանելի և չի կարող իրականացվել պաշտպանի կողմից[9]:

15. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ թեև մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր է եղել պարզել Ա.Խաչատրյանին վերագրվող ենթադրյալ հանցանքի կատարման վայրը, սակայն մեղադրանքի քննությունը տվյալ տարածքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում անհնարին է: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանի քրեական պալատն ընդունելի է համարում տուժողի լիազոր ներկայացուցչի դիրքորոշումը, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը որոշելիս պետք է հիմք ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը, համաձայն որի՝ մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: Սույն վարույթով մինչդատական վարույթն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում, որի նստավայրը գտնվում է Երևան քաղաքում:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ սույն վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Երևան քաղաքում, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն վարույթի քննությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում բխում է նաև արդարադատության շահից:

---

[9] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

16. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՍԴ3/0107/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր չէ:

17. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ՍԴ3/0107/01/25 վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Ավետիք Անդրանիկի Խաչատրյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով թիվ ՍԴ3/0107/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ